ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
06.10.2023
Հրապարակվել է Հայաստանի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդի սեպտեմբերի 5-ի նիստում հավանության է արժանացել «Հայաստանի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը»:

Ճանապարհային քարտեզը կայուն ֆինանսավորմանն անցման գործընթացում ՀՀ կենտրոնական բանկի շարունակական հանձնառության կարևոր ուղենիշ է:

Հայաստանի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը բաղկացած է չորս առանցքային հենասյուներից, այն է՝

- **Մոբիլիզացնել ֆինանսավորումը.** հեշտացնել կապիտալի ռիսկի վրա հիմնված, շուկայամետ և հարատև հոսքը արդյունաբերություն և այլ ոլորտներ, որոնք համահունչ են Հայաստանի ածխածնի արտանետման նվազեցման հավակնություններին:
- **Ընդլայնել շուկաները.** աջակցել գիտելիքների փոխանցմանը, նվազեցնել տեղեկատվական անհամաչափությունները, ապահովել շուկայի նկատմամբ վստահությունը և ամրապնդել կայուն ֆինանսավորման համար նպաստավոր միջավայր:
- **Ներդնել կայուն զարգացման սկզբունքները.** ուղղորդել ֆինանսական հատվածի մասնակիցներին իրենց բիզնես որոշումների մեջ բնապահպանական սոցիալական կառավարման (ESG) սկզբունքների ներդրման հարցում:
- **Ձևավորել իրազեկում և գիտելիք.** բարձրացնել հարատևման ռիսկերի և հնարավորությունների մասին իրազեկության մակարդակը Հայաստանում, զարգացնել կարողությունները ՀՀ կենտրոնական բանկի ներսում և ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում:

Նշված հենասյուների հիման վրա մշակվել է գործողությունների ծրագիր, որը ՀՀ կենտրոնական բանկը կիրականացնի համապատասխան շահագրգիռ մարմինների հետ համագործակցությամբ:

«Հայաստանի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը»՝ ստորև:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ. (010) 592592-0702
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿԱՅՈՒՆ (ՀԱՐԱՏԵՎ) ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

Կայուն զարգացման և կլիմայի փոփոխության միջև փոխազդեցությունը երկկողմանի բնույթ է կրում: Մի կողմից կլիմայի փոփոխությունն ազդում է բնության և մարդկանց հիմնական կենսապայմանների վրա՝ դրանով իսկ հիմք հանդիսանալով սոցիալական և տնտեսական զարգացման համար: Մյուս կողմից, կայուն զարգացման վերաբերյալ հասարակության առաջնահերթություններն ազդում են ինչպես կլիմայի փոփոխություն առաջացնող ջերմոցային գազերի արտանետումների, այնպես էլ կլիմայի հանդեպ խոցելիության վրա:
Ֆինանսական շուկայի մասնակիցները (ՖՇՄ-երը), ինչպես նաև վերահսկող մարմինները կայունության ռիսկերը գնահատելու և կառավարելու մոտեցումներ են ճշգրտում՝ կլիմայական ռիսկերի հատուկ շեշտադրումով: Կլիմայական ռիսկերի տեսակներն ու տնտեսություն դրանց փոխանցման ուղիները ներկայացված են ստորև գծապատկերով:

Կլիմայական ռիսկերն ու դրանց փոխանցման ուղիները

Աղբյուրը՝ BIS, 2021

Կլիմային առնչվող ռիսկերը կարող են ազդել տնտեսության իրական և ֆինանսական հատվածի վրա միկրոտնտեսական կամ մակրոտնտեսական փոխանցման ուղիների միջոցով: Ֆիզիկական ռիսկերը կլիմայի փոփոխության և բնապահպանական այլ խնդիրների հետ կապված

ֆիզիկական ազդեցություններից բխող ռիսկերն են: Նման ռիսկերը կարող են ուղղակիորեն խաթարել ֆինանսական արժեքները, քանի որ կարող են ոչնչացվել ակտիվները, բիզնես գործունեությունը: Անցումային ռիսկերը բխում են դեպի ցածր ածխածնային և էկոլոգիապես ավելի կայուն տնտեսություն անցումից: Կախված կանոնակարգերի փոփոխություններից, տեխնոլոգիական առաջընթացից և շուկայում առկա տրամադրություններից՝ անցումային ռիսկերը կարող են կտրուկ ազդեցություն ունենալ բիզնեսի վրա, նվազեցնել ներդրումների գրավչությունը կամ փոխել մրցակցային միջավայրը տնտեսական հատվածում:
Կլիմայի փոփոխությունն արդեն իսկ ազդում է Հայաստանի վրա. գրանցվել է համաշխարհային ջերմաստիճանի միջին տարեկան աճից բարձր աճ և տեղումների զգալի նվազում: Ի պատասխան՝ ՀՀ կառավարությունն իր ծրագրում ընդունել է կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության մի շարք թիրախներ և դրանք ամրագրել օրենսդրությամբ (N 610-Լ որոշում): Ավելին, Հայաստանը պարտավորվել է էապես նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Փարիզյան համաձայնագրին համապատասխան, ինչպես նշված է իր թարմացված Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններում (NDC): Հայաստանի ֆիզիկական կլիմայական առավել տարածված ռիսկերը, որոնք տարբեր ազդեցության մակարդակի են՝ կախված տեղագրությունից, ջերմային ալիքներն են, երաշտը, ծայրահեղ տեղումները, ջրհեղեղները և սողանքները: Անցումային ռիսկերի պատճառով առավել խոցելի են այն ոլորտները, որոնք ամենաշատն են նպաստում ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումներին և/կամ ունեն ջերմոցային գազերի ինտենսիվության ամենաբարձր մակարդակներ:

2023-ին իրականացված վերլուծության համաձայն պարզվել է, որ կլիմայի նկատմամբ խոցելի ոլորտներին տրամադրված վարկերը կազմում են բանկային համակարգի վարկային պորտֆելի մոտ 29%-ը: Եվս 19%-ը կազմում են հիփոթեքային վարկերը, որոնց հիմքում ընկած ակտիվներն են շենքերը կամ բնակարանները, որոնք կարող են ենթարկվել ֆիզիկական ռիսկերի: Ամբողջ աշխարհում կենտրոնական բանկերը և ֆինանսական համակարգի վերահսկողներն արձագանքում են կայուն ֆինանսավորման միտումներին, ներառյալ՝ ֆինանսական շուկայի ՖՇՄ-երի՝ կլիմայի հետ կապված ռիսկերը հաշվի առնելը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ), լինելով NGFS միջազգային հեղինակավոր հարթակի անդամ 2020-ից, ակտիվորեն համագործակցում և մասնակցում է գիտելիքների և ֆինանսական որոշումների կայացման մեջ կլիմայական և բնապահպանական ռիսկերի ինտեգրման վերաբերյալ տարբեր երկրների լավագույն փորձի փոխանակմանը:

2021-ին ՀՀ ԿԲ-ն դարձավ նաև Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC)-ի Կայուն բանկային և ֆինանսական հարթակի (SBFN) անդամ: ԿԲ-ն ստանձնեց կայուն ֆինանսավորման ճանապարհային քարտեզի մշակումը: Վերջինս երկարաժամկետ ռազմավարական ուղղությունով ուրվագծող շրջանակ է, որի նպատակն է հնարավոր դարձնել կամ արագացնել Հայաստանի՝ իր կլիմայական և կայուն զարգացման նպատակներին հասնելու ունակությունը՝ միաժամանակ բարձրացնելով ֆինանսական հատվածի մրցունակությունը և տնտեսական ճկունությունը: Այն մշակված է առևտրային բանկերի, վարկային հաստատությունների, ապահովագրական ընկերությունների, ակտիվների կառավարիչների, այդ թվում՝ հայաստանյան շուկայում գործող կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կայունության ապահովումը խթանելու համար:

Ճանապարհային քարտեզի հենասյուներն են.

Մոբիլիզացնել կայուն ֆինանսները և ֆինանսավորումը: Ռիսկի վրա հիմնված, շուկայամետ և կայուն ձևով հեշտացնել կապիտալի հոսքը դեպի արդյունաբերություն և գործունեություններ, որոնք համահունչ են Հայաստանի ցածր ածխածնային հավակնություններին:

Ընդլայնել շուկաները: Բարելավել գիտելիքների փոխանցումը, նվազեցնել տեղեկատվական անհամաչափությունները, ապահովել շուկայի վստահությունը և ամրապնդել կայուն ֆինանսավորման համար նպաստավոր միջավայր:

Ներդնել կայուն ֆինանսները: Ուղղորդել ֆինանսական հատվածի մասնակիցներին իրենց բիզնես որոշումների մեջ Բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ) սկզբունքների ներդրման հարցում:

Ձևավորել իրազեկում և գիտելիք: Բարձրացնել կայունության ռիսկերի և հնարավորությունների մասին իրազեկությունը Հայաստանում, զարգացնել կարողությունները ԿԲ-ի ներսում և ՖՇՄ-երի շրջանում:

Քարտեզով սահմանված գործողությունների կատարման ժամկետները ներկայացված են ստորև աղյուսակում:

	Գործողություն	2023	2024	2025	2026	2026 -ից հետո
ՄՈԲԻԼԻԶԱՑՆԵԼ կայուն ֆինանսները և ֆինանսավորումը	Ձևավորել կայուն ֆինանսական պրոդուկտների և պարտատոմսերի շրջանակներ					
	Ներդնել սոցիալական նկատառումներ՝ ֆինանսական ներառականությունը բարձրացնելու նպատակով					
ԸՆԴԼԱՅՆԵԼ շուկաները	Ստեղծել կայուն ֆինանսների կենտրոնացված տվյալների բազա					
	Ուսումնասիրել շուկայի խրախուսական միջոցները և խթանները					
	Իրականացնել հետազոտական և գնահատման աշխատանքներ					
	Նախագծել առաջընթացի հետագծման շրջանակ					
ՆԵՐԴՆԵԼ կայուն ֆինանսները	Ինտեգրել ԲՍԿ-ն վերահսկողության շրջանակում					
	ՖՇՄ-ների համար մշակել ուղեցույցեր և ակնկալիքներ ԲՍԿ-ի ինտեգրման և ռիսկերի կառավարման վերաբերյալ					
	Ինտեգրել ԲՍԿ-ն ՖՇՄ-ների կորպորատիվ կառավարման մեջ					
ՁԵՎԱՎՈՐԵԼ իրազեկում և գիտելիք	Ստեղծել կարողություններ ԿԲ-ում					
	Ստեղծել կայուն ֆինանսների ազգային կենտրոն/հաբ (SFH)					
	Անդամակցել կայուն ֆինանսների միջգերատեսչական աշխատանքային խմբերի					
	Ընդլայնել և ստեղծել նոր գործընկերություններ					